ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով Կողմերի, նրանց քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքների նկատմամբ փոխադարձ պահանջները կանխարգելող եւ դրա պաշտպանությունը երաշխավորող իրավական նորմերի անհրաժեշտությունը,

հաստատելով սեփականության իրավունքի, որպես լիարժեք միջպետական հարաբերությունների կանոնակարգման համար հիմքի, կարգավորման անհրաժեշտությունը,

արտադրության արդյունավետ զարգացման եւ միասնական տեխնոլոգիական համալիրների պահպանման համար պայմանների ստեղծման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, փոխադարձաբար, իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան իրականացված ֆինանսական ռեսուրսների, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, դրանց կառուցվածքային միավորների եւ Կողմերի տարածքներում տեղակայված նախկին միութենական ենթակայության ստորաբաժանումների գույքի անցումը ճանաչում են որպես իրենց սեփականություն:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է մյուս Կողմի, նրա քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքները նրա տարածքում տեղակայված ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների եւ այլ օբյեկտների (մասնաճյուղեր, բաժիններ, փայեր, բաժնետոմսեր եւ այլ գույք) նկատմամբ, որոնք 1990 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ գտնվում էին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող նախկին միութենական հանրապետությունների պետական կառավարման մարմինների իրավասության ներքո, ինչպես նաեւ հանդիսանում են այլ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց սեփականությունը, բացառությամբ օբյեկտների, որոնք կառուցվել են ֆորս-մաժորային իրավիճակների հետեւանքների վերացման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 3

Հողի եւ այլ բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքները կարգավորվում են այն Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում են սեփականության օբյեկտները, եթե այլ բան նախատեսված չի Կողմերի այլ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են, որ իրենց տարածքներում գտնվող սոցիալական ոլորտի օբյեկտները (կամ մասնակցության համապատասխան բաժինները)՝ սանատորիաները, պրոֆիլակտիկ սանատորիաները, հանգստյան տները եւ հանգրվանները, պանսիոնատները, հյուրանոցները եւ քեմպինգները, զբոսաշրջային հանգրվանները, մանկական առողջարանային հաստատությունները, որոնց շինարարությունը իրականացվել է այլ Կողմերի միութենական բյուջեների, ինչպես նաեւ այլ Կողմերի տարածքներում գտնվող հանրապետական եւ նախկին միութենական ենթակայության ձեռնարկությունների եւ կազմակերպությունների միջոցների հաշվին, հանդիսանում են այդ Կողմերի կամ նրանց իրավաբանական ու ֆիզիկական անձանց սեփականությունը:

Սոցիալական ոլորտի այլ օբյեկտները, Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, կարող են լինել տվյալ Համաձայնագրի առարկա:

Կողմերը նպատակահարմար են համարում իրենց տարածքում տրամադրել մյուս Կողմերին, նրանց իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ինչպես գործող, այնպես էլ ստեղծվող սոցիալական ոլորտի օբյեկտների օգտագործման, տնօրինման եւ տիրապետման համար հողամասեր: Մյուս Կողմին հողամասերի տրամադրումը, ինչպես նաեւ դրանց օգտագործման համար վճարումը իրականացվում է օբյեկտի գտնվելու վայրի Կողմի օրենսդրությամբ սահմանված ընդհանուր հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 5

Զինված ուժերի, սահմանապահ, ներքին եւ երկաթուղային զորքերի, ինչպես նաեւ Ծովային նավատորմի նախկին նախարարության ուղեւորատար եւ տրանսպորտային նավերի գույքային հարցերի կարգավորումը իրականացվում է Կողմերի միջեւ կնքվող հատուկ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 6

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի մյուս Կողմին, նրա ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վաճառել, փոխանակել, գրավ դնել, վարձատրության տալ, անհատույց կամ պայմանագրային հիմունքներով փոխանցել իր սեփականությունը:
Սույն հոդվածի դրույթների իրագործումը իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի պետական գույքը տնօրինելու լիազորություններ ունեցող պետական կառավարման մարմինների կողմից, օբյեկտի գտնվելու վայրի Կողմի օրենսդրությանը համապատասխան, եթե այլ բան նախատեսված չի Կողմերի միջեւ կնքված այլ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը համաձայնել են օժանդակել նախկինում Կողմերի բաժնեմասային կամ համատեղ սեփականության ձեւով ստեղծված ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ ընկերությունների, այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունների պահպանմանը: Եթե նման ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ ընկերությունների, որոնց գույքը գտնվում է Կողմերի տարածքներում, հիմնադիր է հանդես եկել նախկին ԽՍՀՄ նախարարությունը, գերատեսչությունը կամ նախկին միութենական պատկանելության ձեռնարկությունները, նրանց հիմնադիր փաստաթղթերը ենթակա են պետական գույքը կառավարելու լիազորված մարմինների կողմից ճշգրտման՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ ընկերությունների գտնվելու վայրի Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը, պետական գույքը տնօրինելու լիազորված մարմինների համատեղ որոշմամբ, կստեղծեն ձեռնարկություններ սեփականության բաժնային եւ համատեղ ձեւով, այդ թվում Կողմերի տարածքներում գտնվող ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ նախկին միութենական պատկանելության հաստատությունների եւ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների հիման վրա:
Նշված ձեռնարկությունների հիմնադրումը եւ գործունեության կարգը կարգավորվում է այն Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում դրանք ստեղծվում են, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի այլ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը պայմանավորվեցին, որ անավարտ շինարարության օբյեկտները, որոնք գտնվում են նրանց տարածքում եւ նախկինում ֆինանսավորվել են նախկին ԽՍՀՄ մարմինների կողմից, օբյեկտի գտնվելու վայրի Կողմի որոշմամբ կարող են փոխանցվել օբյեկտի գտնվելու վայրի Կողմի եւ մյուս Կողմերի, նրանց իրավաբանական անձանց

բաժնային եւ համատեղ սեփականությանը, որոնք իրենց վրա են վերցրել աշխատանքները ավարտելու պարտավորությունը՝ այդ օբյեկտների գույքի հիման վրա ստեղծելով համատեղ ձեռնարկություններ: Տվյալ հարցի վերաբերյալ որոշումն ընդունում են պետական գույքը տնօրինելու լիազորված Կողմերի մարմինները:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը կապահովեն մյուս Կողմերի, նրանց իրավաբանական եւ ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունների եւ համատեղ ձեռնարկությունների գործունեության հետ կապված օրինականորեն ստացված եկամուտների եւ վճարների փոխանցումը՝ ձեռնարկության, կազմակերպության, հաստատության, գտնվելու վայրի Կողմի օրենսդրությամբ նախատեսված հարկերի եւ տուրքերի վճարումից հետո:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերից մեկի սեփականությանը վերաբերող եւ մյուս Կողմի տարածքում գտնվող օբյեկտների սեփականաշնորհումը իրականացվում է սեփականատիրոջ որոշմամբ: Սեփականաշնորհման կարգը եւ պայմանները որոշվում են պետական գույքը տնօրինելու լիազորված Կողմերի մարմինների միջեւ կնքվող համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերը պայմանավորվեցին, որ նախկինում ստեղծված ձեռնարկությունների իրավական կարգավիճակը, որոնք սույն Համաձայնագրի հիման վրա ճանաչված են մի Կողմի սեփականություն եւ գտնվում են մյուս Կողմի տարածքում, սահմանվում է պետական գույքը տնօրինելու լիազորված Կողմերի մարմինների միջեւ կնքվող արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում թվարկված ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների եւ այլ օբյեկտների գործունեությունը կարգավորվում է այն Կողմերի օրենսդրություններով, որոնց տարածքում նրանք գտնվում են, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջեւ կնքված համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 14

Կողմերը ընդունում են, որ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ստեղծվող կենտրոնացված ծառայությունների օբյեկտների գույքային իրավունքները կարգավորվում են Կողմերի միջեւ կնքվող հատուկ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 15

Կողմերի, նրանց իրավաբանական եւ ֆիզիկական անձանց սեփականությունը օգտվում է լրիվ եւ անվերապահ իրավական պաշտպանությամբ, որն ապահովում է այն Կողմը, որի տարածքում դրանք գտնվում են: Այդ սեփականությունը չի կարող ենթարկվել հարկադիր առգրավման, բացառությամբ օրենսդրական ակտերով նախատեսված բացառիկ դեպքերի: Հիշատակված սեփականության հարկադիր առգրավման դեպքում նրա տիրոջը պետությունը վճարում է փոխհատուցում, որը համապատասխանում է առգրավվող սեփականության իրական արժեքին՝ սեփականության գտնվելու Կողմերի օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

ՀՈԴՎԱԾ 16

Կողմերը ընդունում են, որ ներդրումներ իրականացնող նրանց իրավաբանական եւ ֆիզիկական անձինք միմյանց տարածքներում դիտվում են որպես օտարերկրյա

ներդրողներ: Կողմերից յուրաքանչյուրի տարածքում նրանց գործունեությունը իրականացվում է համաձայն օտարերկրյա ներդրումների մասին նրա օրենսդրության եւ միջազգային համաձայնագրերի, որոնցում մասնակցում են Պայմանավորվող կողմերը:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագրի նորմերի մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ Կողմերի միջեւ վեճերը կլուծվեն տարբեր մակարդակներով՝ փոխադարձ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Եթե վեճը չի կարող կարգավորվել այդ ճանապարհով, ապա Կողմերից մեկի պահանջով այն փոխանցվում է Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի որոշմանը:

ՀՈԴՎԱԾ 18

Փոխադարձ պայմանավորվածությամբ Կողմերը կարող են սույն Համաձայնագրում կատարել անհրաժեշտ լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով եւ հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ Համագործակցության այն մասնակից պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է նման համաձայնագրերի վավերացում՝ ավանդապահ պետությանը վավերագրերի հանձնման օրվանից:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 1992 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի մայիսի 24-ից: